ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՄԱՍԻՆ

Հոդված 59. Կամավորի պարտականությունները

1. Կամավորը պարտավոր է՝

1) կատարել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

2) կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ ու ժամանակին.

3) կատարել պրոբացիայի ծառայության մարմինների և պաշտոնատար անձանց՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունված հրամաններն ու որոշումները, տրված կարգադրություններն ու ցուցումները.

4) պետական~~, ծառայողական~~ կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելիս պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները.

5) ապահովել պայմանագրով իր ստանձնած պարտականությունների կատարումը:

2. Կամավորը պարտավոր է իրեն վերապահված իրավունքներն իրացնել օրենքին համապատասխան և իր գործունեության ընթացքում թույլ չտալ քաղաքացիների ու կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի որևէ խախտում:

3. Կամավորի համար օրենքով և պայմանագրով կարող են սահմանվել նաև այլ պարտականություններ: